


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
**Ե. ՓՈՐՈՍԵԱՆ**  
 ՆԱԾԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ԳՈՌԹՈՒԻՆ  
 ՊԵՏՐ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ  
 Խմբագր. ԱՐՇԱՆՈՅՍ Լրագրի  
 ԳԱՂԻՐԷ (Հասպագրի)

Rédaction du journal arménien  
**ARCHALOUICE**  
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)



**ԼՐԱԳԻՐ**

**ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ**

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆ

ԵԳԻՊՏՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահլիճ. 60	
Վեցամսեայ » 35	
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ 20	
Վեցամսեայ » 12	

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻ ԿԱՆԽԻԿ Է  
 ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ՓԱՐՔԸ  
 Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղուած գրութիւնք եւ չ'են սրուիր:

**ԿԱՆԱՆՑ ԱԺԽԱՐՀԵՆ**

ԿՆՈՂ ԱԶՍԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Կինը իբր գրագէտ եւ հրատարակագիր

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Ի՞նչ գեր ունեցած է կինը գրականութեան մէջ:

Կնոջ տեսութեանն չէր կրնար վրիպեր գրականութիւնը՝ որ ա՛յնքան մտախի կը գտնուի իւր սրտին ու մտքին. հո՛ն պիտի երգէր հոգւոյն բոլոր թափովը երգը սիրելոյն, ողբար անոր մահը. հո՛ն պիտի ժայթքեցնէր դառնութիւնները իւր սրտին. հո՛ն պիտի անիծէր ուխտագրուածը, պարասաւէր կեղծաւորը. հո՛ն պիտի պաշտպանէր իւր անտես առնուած իրաւունքները. վերջապէս գրելը պիտի գործածէր իբր սփոփիչ գործի կենացը դառն վայրկեաններուն, և իբրև սուր անձնապաշտպանութեանը համար:

Քաղաքակրթութեան յառաջացմանը հետ շեշտուեցաւ կարևորութիւնն ալ գրչին, և կինը գիտցաւ գործածել պատշաճօրէն այդ գէնքը:

Ամէն յառաջացեալ երկրաց մէջ կինը ունի իւր ներկայացուցիչը գրականութեան մէջ. բաւականանա՞նք ի մէջ բերելով անոնցմէ մին:

Առնենք իբրև օրինակ Ֆրանսան. ի՞նչ կը տեսնենք հոն. 16րդ դարէ մինչ 18րդ դար, նավարի թագուհիէն մինչ Տիկին Տը Սդալ, ստուար թիւ մը կին գրողներու որք բաւականին ազդեցութիւն ունեցած են իրենց ժամանակին գրական աշխարհին մէջ: Տիկին Տը Մօթվիլ, Օր. Տը Մօնթանսիէ իրենց « յիշատակագիրներ » ուլը (memoires) Տիկին Տը Լաֆայէթ իւր գլուխ գործոցովը՝ Բրէնսէս Տը Քրիշվ. Տիկին Տը Սէվինէի գրած նամակները առ իւր ազդիկն Կրիսնան, որք օրը օրին գրուածներ են և որոնց մէջ կայ ամբողջ պատմութիւն մը նկարուած կնոջ զգայուն ոգովը: Բայց ընկերութեան վերայ ամենէն աւելի ազդած են Մարցոններու պարբերական հաւաքումները, որպիսիք են Բամպուլիէ Մարգիզուհւոյն Մարցոնը, որ կը ժամագրէին բաւական հոյակապ անձեր՝ որոնց մէջ նշանաւոր են Մալհէրպ և Գորնէյլ:

ոչ նուազ կարևոր է նաև Օր. Տը Սքիւտէրի շարաթ օրերու հաւաքումները - les samedis. այս և նմանօրինակ գրական ահուճներու յղացումը և արդիւնքն է Ֆրանսայի Կաճաւը Բիշիէօյի օրով:

Այս բոլորին մէջ կը տեսնուի կնոջ դերը և ո՛չ ապաքէն դեռ վերջերս Փարիզ հաստատուած լրագրական վարժարանին տեսուչը կին մ'է, ձեռներէց կին մը:

Միտիթարական է որ մեր մէջ ալ գըտնուած են կին գրողներ. Տիկին Տիւսար նոր էջ մը բացած է հայ կանանց գործունէութեան, թէպէտ Մայքայի մէջ կնոջ ազատագրութեան հարցովը կ'զբաղի: Իրմէ վերջ Սիպիլ և Անայիս, յետոյ Կայիբոյ և Ֆիմի, և վերջին ասաններս ալ Ջարուհի՝ արդէն սկսուած գործ մը կը շարունակեն՝ ստուարացնելով հետզհետէ հայ կին գրողներութիւնը: Իւրաքանչիւրը իւր մասնաւոր սկզբբաւը և ոճովը կը ներկայանայ՝ ունենալով իրեն ճիւղը յատուկ. մին ոտանաւորը, ուրիշ մը վէպը, երրորդ մը ընտանեկան ներքին կեանքը իւր զանազան երանդներովը կը ներկայացնեն:

Եզիպտահայ մամլոյն մէջ կանանց քաժնի երևումը որքան շահեկան՝ նոյնքան քաջալերական է:

Շահեկան է, մէկէ աւելի տեսակէտներով. նախ՝ արտասահմանի մէջ Եզիպտոս կրնայ համարուիլ առաջինը իւր կանանց քաժնի ուլը, և երկրորդ նմանօրինակ քաժնի մը կրնայ բաւականին ազդեցութիւն ունենալ իւր շրջանակին մէջ, և ծառայել իբրև տեսակ մը պատուաստ այլասեռած և բարոյապէս քայքայեալ ընտանեաց. արդէն — ընդհանրապէս խօսելով և յարգելով միշտ բացառութիւնները — Եզիպտոսի մէջ գոյութիւն չ'ունի ընտանեկան կեանքը այնպէս ինչպէս որ կ'ըմբռնուի Արևելքի մէջ. շատեր միջավայրին ազդեցութեանը ներքև իրենց ուրոյն սովորոյթը կորուսած են, մէկ խօսքով, տարասեռած են: Այստեղ ոտէպ կը լուի բարոյականի շահատակութեանց, ցնցող իրականութեանց պատմութիւններ:

Կանանց քաժնի երևումը է նաև քաջալերական, որպէս զի ունենայ իւր հետևողները:

Որքան լպիրշ գրուած մը անդգալի կեր-

պիւ կը ջլատէ անվարժ ընթերցող մը, նոյնքան բարոյապէս կը շինէ տնարար յօդուած մը. Արշարոյսի վերջի երկու թուոցը մէջ երեցած կանանց քաժնի խօստամայից կ'երևի, մեր համակրանքը ալ ընիւ յօդուածագրին:

24/11/99

ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՄԼԵԱՆ

**ԽԱԼԻՓԱՅԻՆ ՄԱՅԸ**

Լօրտ Քրօմէր հետեւեալ հեռագիրը ընդունեց Օմուրմանէ 25 նոյ. թուով:

Ահաւասիկ Ուինկէթ փաշայէն ընդունուած նոր մանրամասնութիւններ.

Արաբ հեծելազօրներու շտապ մը Օմ. Տէպրիգայի մէջ գտաւ խալիֆային բանակատեղը: Մեր զինուորները լուսնի լուսով թողուցին Կէճիսը և տաժանելի գնացքէ մը վերջ, որու միջոցին շատ անգամներ ստիպուեցան ճամբայ բանալ խոր անտառներուն մէջէն, և արշալոյսէն առաջ խալիֆային բանակատեղոյն իշխող լեռնակի մը վրայ հասան:

Իրենց թմբուկներուն ձայները լսեցինք և առաւօտեան ժամը հինգը քառորդ անցած Տէրվիշները յառաջացան մեր վրայ յարձակելու:

Մեր թնդանօթները անմիջապէս կրակ ընէլ սկսեցին և ճակատամարտը իսկոյն ընդհանուր եղաւ:

Կէս ժամ վերջը մեր զինուորները երկու մղոն հեռաւորութիւն կտրելով, հասան մինչեւ Տէրվիշներուն բանակատեղին:

Գնդապետ Մահմեթ հրամայած հեծելազօրքը փախտականներուն ետեւէն ինկաւ և անոնցմէ շատերը գերի բռնեց: Խալիֆան էմիրներէն շատերուն ու իր պահակ զօրքերուն հետ քաջաբար գիմադրեց մինչև. վերջին շունչը և սպաննուեցաւ, ինչպէս նաև Մահմեթի որդին և ուրիշներ, որոցմէ ոմանք վիրաւորուեցան, ոմանք ալ ձերբակալուելով բանտարկուեցան:

Համառօտաբար, Օման Տիլմայէն զատ բոլոր գլխաւոր պետերը սպաննուած, վիրաւորուած կամ՝ բանտարկուած են: Օման Տիլման հրացանաձգութիւնը սկսելուն պէս փախաւ և հաւանականաբար շրջակաները կը պահուի: Կը յուսացուի զայն ևս քիչ ատենէն ձեռք ձգել:

Տէրվիչներուն ամբողջ բանակատեղը առնուեցաւ հազարաւոր մարդերով, կիսն-րով և տղաքներով :

Հիմա մեր նպատակին հասած ենք. կ'ըսէ հեռագիրը, մեր կարուստները անըն-շան են. երեք մեռեալ և տասներկու վի-րաւոր ունեցանք :

### ՔԱՂՈՒԱԾ Ի ԱՅ ԹԵՐԹԵՐԷ

Կ. Պօլսոյ հայ լրագրիչները կը հազորդեն թէ, կը գրէ Մեակ, «Հայերու օգնող գերմանական գումի-թէ»ի անգամ Տօքթօր Բօրբախ, Այրազպուրիկ Կա-ւետարանական միսիօնարական տան գահիճին մէջ ճառ մը արտասանած է գերմանացի երկու սեռէ բազմաթիւ հասարակութեան առջև :

Համառօտ կերպով նկարագրելով նա Տօքթօր Լէպսիտի հետ թուրքաց Հայաստանի մէջ իր ըրած ճանապարհորդութիւնը և պատմելով թա-փառական քրտներու աւազակային կիսնքը, Տր. Բօրբախ ներկայացուցած է գերմանական գումի-թէի հաշիւը, ընդամենը 8 միլիօն մարքի :

Այդ հաշիւէն կը տեսնուի որ Գերմանիայէն Հայաստան դրկուած է երկու միլիօն մարք, իսկ մնացածը Եւրոպայէն և Ամերիկայէն :

Ըստ Տօքթօր Բօրբախի գերմանական որբա-նոցներուն մէջ կը խնամուին 2000 որբեր. Տօքթօր Ռէյնօլտս շատ հոգ կը տանի որբերուն և անոնց դաստիարակութեան՝ ըսած է, և վանի մէջ հիմնած է երկրագործական դպրոց, որ թուրքաց Հայաս-տանի մէջ անդրանիկն է :

Բաց ի ատոնցմէ Ռէյնօլտս իր շրջանին մէջ ներկայ տարւոյ Յունուար ամիսէն մինչև ապրիլը 42,201 մարք զբամական նպաստ բաժնած է 356 հայ գիւղերու :

Նկարագրած է հազարաւոր հայկու՞ թշուառ դրութիւնը որոնք ենթակայ են ցրտի և սովի և որոնք կարօտ են զբոյ օգնութեան դեռ շատ տարիներ :

Բօրբախ կը հաւատացնէ թէ գերմանական գումիթէն նպատակ չունի բողոքականութիւն ըն-դունել տալ հայ որբերուն :

Մեակ հետեւեալը կ'արտատպէ Ռուսական թերթէ մը.

« Լոնտոնի մէջ սաստիկ յուզմունք կը տիրէ : Լրագրագաճառները երէկ առաջին անգամ փողոց-ներուն մէջ կաղաղակէին « Դժբաղդութիւն բրի-տանական զօրքերուն » :

Զինուորական նախարարութեան դուռը հա-ւաքուած էր անհամար բազմութիւն. ամենքն ալ կոտորածների ցուցակը կուզէին ձեռք բերել : Գա-ւառներէն Լոնտոն կը դիմեն իրենց բարեկամներու մասին տեղեկութիւն ստանալու համար :

Պաշտօնական հեռագիրներուն ոչ ոք հաւատ կ'ընծայէ. կը կարծեն որ սպաննուածներու և վիրաւորեալներու թիւը աւելի է քան ինչ որ կը հազորդին պաշտօնական հեռագիրները :

Լէյտի Սմիթի մէջ գտնուող անգղիական զօր-քերու ձախ թեւը բոլորովին ոչնչացած է : Իրլան-տական հրացանաձիգ զօրքը, գլոսթէրեան գունդը և լեոնային թնդանօթաձիգ զօրքերը, նախ քան թշնամու ձեռքը ընկնելը, մեծ քանակութեամբ կոտորուած են : Մեծ կորուստներ ունեցած են նաև նախնաճող զօրքերը :

Շատ մը պաշտօնականներ վիրաւորուած են : Լոնտոնի պաշտօնական ժողովարանի մէջ կ'ըսեն թէ՛ բրիտանական զէնքը 120 տարուան ընթաց-քի մէջ այսպիսի հարուած կրած չուի :

Լոնտոնի մէջ երկիւղ կը կրեն թէ հարաւային Ափրիկէի ընդհանուր ապստամբութիւն տեղի կու-նենայ, մինչև անգամ կը կարծուի թէ. Սուսանը և Եգիպտոսը նոյն իսկ կ'ապստամբին : Ամենքն ալ կը մտադրեն մէնէրալ Ռուայթը, իրեն ինչնա-հաւանութեանը համար :

Նոս-Գաիի գրածներուն նայելով հետզհետէ թրանսպալէն նամակներ կ'սկսին կրեալ թեր-թերու մէջ. անգղիական ազդեբներէ ըլլալու պայմանաւ :

Մամաւոր հետաքրքրութեան արժանի է

Փրէթորիայէն Փօլիք. Գոթեբոլիսանի ուղղուած նամակ մը թրանսպալի հանրազօրքի հաւաքման մասին : Հոկտեմբեր էին պօէրներու, ինչպէս նաև պատերազմի մասնակցելու փափաք յայտնող օտար երկրացիներուն մազուէրեան հրացաններ բաժ-նուեցան և յայտարարուեցաւ որ հետեւեալ օրը ճանապարհ պիտի իյնան :

Ընդհանուր զինուոր քի մը իրարանցում ձը-գեց, որը սակայն երկար չտեւեց : Առևտրական բոլոր հաստատութիւնները իրենց գործունէու-թիւնը դադարեցուցին. խանութներու դռներն ու լուսամուտները տախտակուեցան :

Հետեւեալ օրը մեկնեցան երկաթուղոյ առա-ջին վեց զինուորական կառավարները : Անտոյի կ'ըլլայ երեւակայի թէ ուրիշ որեւէ երկրի մէջ զօրքերը այնքան արագ հաւաքուի կարելի կը լինի, որքան թրա՛ սվայի մէջ :

Խնդիրը այն է որ քանակչորս ժամուան մէջ քաղաքացիները զինուած, հաւաքման վայրը դի-մած էին և վազուէրները լեցուած :

Հետաքրքրական տեսարան մը կը ներկայա-նար թէ ինչպէս երկաթուղոյ կայարանին մէջ կիներ և աղջիկներ հրաժեշտ կուտային իրենց ամուսիններուն, զաւակներու : և եղբայրներուն : Անոնց և ոչ մէկը կուլար, ինչպէս սովորաբար կը պատահէ : « Տղամարդի՛կ, կատարեցէ՛ք Ձեր պարտքը » կ'ըսէին անոնք հրաժեշտի ատեն իրենց ամուսիններուն զաւակներուն և եղբայրներուն :

Ամենակարեւոր մէկ նշանակելի պարագան ալ այն էր որ այս ամենը, առանց նուազածու-թեան, առանց ճառախօսութիւններու և առանց զինուորական ուժէ ցոյցի տեղի կուներար :

Պօէրները լռիկ վազուէրները կը մանէին և աղաղակ մը չէր լսուէր :

Գերմանացի Տիկին մը այս տեսարանին վրայ ապշած, վազուէրներու իւրաքանչիւր բաժանումին մէջ կը մտնէր մեկնողներու ձեռքը սեղմելու հա-մար, և կ'ըսէր անոնց « Աստուած տայ որ ամէնքդ ալ շուտով վերադառնաք » : Պօէրները կը պատաս-խանէին « Այդ բանը խոստանալ կարող չենք, բայց կ'աշխատինք » :

Պօէրներու հայրենասիրութեան և անձուր-րութեան իրրեւ օրինակ, յիշատակելի է այն պա-րագան որ Գրեկէրստորֆի մէկ մասին մէջ տեղի ունեցած է : Երբ զէնքի կանչուած էր 400 հոգի, ներկայացած են 670 հոգի : Գաւառագիտի տաղար-կին վրայ թէ 270 հոգի աւելորդ են և կրնան իրենց տները վերադառնալ, ոչ ոք հաւակերպեցաւ և ամենքը միասին պատերազմի դաշտը մեկնեցան :

Մարանսպուրի մէջ զէնքի կոչուած էին 150 պօէր, այս հրաւերին պատասխանած էին 600 հոգի, կառավարմբը պատրաստ էր մեկնելու, բայց ոչ ոք տեղէն կը շարժէր, մանաւանդ թէ հոն հաւաք-ուած բազմութեան անցնելու ճանապարհ ալ գտնել կարելի չէր :

Գարոջի մը հրաժեշտի ճառ մը խօսեցաւ հոն, որ ներկայ եղողներու աչքերէն արտասուեաց կա-թիլի եր թափեցան թէև, սակայն շուտով ամենքն ալ հանգստացան և հանդարտ սրտով պօէրները պատերազմի դաշտը մեկնեցան (1) :

### ԵՆՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Փարիզ 20 Նոյեմ. 99

ԵՐԷԿՈՒԱՆ ՁԵՐԲԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Հասարակապետութեան յաղթանակի տօնը մինչև առաւօտեան ժամը Ձը տեւեց : Փա-րիզի շատ մը փողոցներուն մէջ ցոյցեր եղան նպաստաւոր և աննպաստ. սակայն ցոյցերու կեղծոն էր Բլաս տը լա Նասիօնը, ուր ամ-բոխը աւելի մեծ բազմութեամբ էր : Ձեր-բակալուեցան աղմկայից ցուցարարներ և մանաւանդ թշնամական և դրդուիչ գործեր

(1) Մենք հայերս ալ մինչև որ պօէրներու հայրենասիրութիւնը և անձուրիւրութիւնը ցոյց չտանք, իրաւունք չունինք յուսալու թէ փրկու-թիւնը օր մ'ալ մեր դուռը պիտի բաղխէ ներս մտնելու համար :

կատարողները : 12-15 հոգիներ ձերբա-կալուեցան՝ որոնք ամենքն ալ անիշխանա-կաններ են :

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՊՕԷՐՆԵՐԸ. — Գեր-մանիոյ կայսեր Անգղիոյ թագուհւոյն ըրած այցելութեան ժամանակ, հետաքրքրութե-նէ զուրկ չէ Համպուրիկ նասիօնալիստնե-րու նոր ցոյցն մասնանիշ ընել :

Համպուրկցիք գրեթէ ամենքն ալ Անգղիոյ հակառակ են թրանսպալի խնդրոյն համար : Միայն յառաջադիմական ազատա-միտ գաղափարի կուսակիցներն վերապա-հուծեամբ կը նային խնդրոյն. իրենց բերանն Հաւպուրկի վտանգ մը կը տեսնէ Անգղիոյ յաղթուելուն մէջ — առանց ասոր համար Պօէրներուն հակառակութիւն ցոյց տալու, ընդհակառակը — վասն զի կ'ըսէ, Տրանսա և Ռուսիա ևս աւելի պիտի մեծնան և ուրիշ վտանգ մը պիտի լինին քաղաքակրթութեան :

— Անգղիական միջոց. — Ամէն ոք գիտէ թէ Գերմանիոյ կայսրն Կիլիօմ Բ, իւր մօր-մէն — որ Վիլիթօրիա թագուհւոյն աղջիկն է — բոլորովին անգղիական կրթութիւն մը և գաստիարակութիւն մը ստացած է :

Նա աւելի Օքսֆորտի երիտասարդ ու-սանդի մը նման մեծցած է քան թէ Գեր-մանացի իշխանի մը նման :

Անգլիացի աւագանիներն մեծ յոյս ու-նէին կայսեր անգղիական սովորութիւննե-րուն վրայ, զայն իրենց կողմն քաշելու համար, սակայն Կիլիօմ քաղաքավարու-թեամբ մերժած է իրեն ուղղուած հրաւեր-ներէն չատերն :

Ուրեմն անգղիական աշխարհային գլխէ հանելու միջոցներն ալ շուրջ կ'իյնան :

A. S. ԵՒ Մ. Ս. ԳԱԻԻԹ ԲԷԿ

### Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Գահիրէնակ ազգայիններէն շատերը տրտունջներ կը յայտնեն մեզի թէ, ինչո՞ւ «Արշալոյս»ի միջոցաւ հրաւիրած ենք զի-րենք նորահաստատ ազգային տուրքը վճա-րելու համար, և կ'առարկեն միևնոյն ժամա-նակ թէ ազգային իշխանութիւնը երբէք ստիպողական պատճառ մը չունի ազգային տուրքը հաստատելու համար :

Բանի որ, կ'ըսեն, ազգային տուրքը Սահմանադրութեան կեդրոնին — Կ. Պօլսոյ — մէջ նախատեսուած է,

նախ՝ վարչութեան արտակարգ ծախ-քերը հայկալթելու համար. մինչդեռ Գա-հիրէ այդ տեսակ ծախքեր ընելու ենթա-կայ չէ :

Երկրորդ՝ երբ ազգային սնտուկը յայտ-նի բաց մը ունենայ, ինչ որ չունի Գահիրէի սնտուկը և նոյն իսկ յաւելեալ պահեստի գումար ունի կ'ըսուի :

Երրորդ՝ Սահմանադրութիւնը չ'տրա-մագրեր իր ոչ մի յօդուածովը, քուէար-կութեան ատեն ազգային տուրք հաւաքե-լու բռնի միջոցը և ասոնց նման շատ մը պատճառներ ցոյց կուտան մեզ :

Մենք՝ այդ ամենուն կը պատասխա-նենք որ մեր գրուածոց մէջ ո՛րեւէ տեղ մը հաստատած չենք թէ Ազգային վարչու-թիւնը իրաւացի է և թէ բանաւոր հիմ-բու վրայ դրած է ազգային տրոց հաս-տատութիւնը, բայց գիտնալով և մօտէն

### ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ժանօթ ըլլալով Ազգային առաջնորդարանի ներքին նպատակին որ է Երեսօրհիւ. Ժողովոյ պակասեալ անդամաց ընտրութիւնը ընտանեկան շրջանակի մէջ կատարելէ ինչ որ անգամ մ'ալ ըսած ենք, յարմար տեսած ենք որ հայ Ժողովուրդը գոնէ գրամ վճարելով անգամ մը ճանչցունէ աղաներուն թէ՛ ինք ձայն ունի և իր ձայնը մանաւանդ մեծ կշիռ պէտք է ունենայ ինքնահաւան աղաներուն վրայ: Եթէ այդ արժէքը անգամ մը հասկնան Ազգային վարչութեան ղեկավարներն, մենք վստահ ենք որ քիչ ատենէն պիտի փութան կծիկը գնելու, այն ատեն Ժողովուրդի կամքին կը մնայ Ժողովուրդական անձեր ընտրել և ի հարկին բառնալ ազգային տուրքը, երբ ազգային գործոց մատակարարութեան մէջ բաց մը գոցելու հարկը չ'տեսնուիր:

Մի ուրիշ միջոց ալ: Եթէ ազգային տուրքը չ'վճարելով քուէարկելու փափաքողները շատ են, ինչ որ անտարակուսելի է, կրնան օրինաւորապէս և գրաւոր կերպով բողոքել եղած կարգադրութեանց դէմ և իրենց իրաւունքը ձեռք բերել, փոխանակ մեղադրելու գնեղ, որ և էլ մէկ ատեն պաշտպանած ենք ազգային տուրքի դրութիւնը:

#### ԵՐԿՈՒ ՈՐԲԱՆԱՄՆԵՐՈՒ

Արաբկիրցի բարեպաշտ Տիկին մը, որ երբեմն իւր մեծափարթամ վիճակին մէջ իսկ ազբատաց և որբոց գորովագութ մայր մը եղած էր, վերջերս հանրածանօթ դէպքերու հետեանք Գահիրէ գալթամ լինելով հանդերձ, դարձեալ Հայաստանի գաւառներուն մէջ սովատանջ և ցրտասարսուռ որբերու վիճակը իւր ուշադրութեանը առարկան ըրած է, և «այլի կնոջ լուման» է ըսելով Խմբագրութեանս ուղարկած է 100 դրչ. ողջ եղիպտ. փափաք յայտնելով որ մեր միջոցաւ բաժնուի սոյն գումարն կէս առ կէս Գաղաթիս մէջ կազմակերպուած Վասպուրականցի և Արաբկիրցի Ազգայնոց Որբանոցամ' ընկերութիւններուն:

Արդ՝ կը հրաւիրենք երկու որբանոցամ' ընկերութեանց Պատ. Գործադիր Ժողովները որ հաճին դիմել մեզ ստանալու համար 50 ական դրչ. ողջ. որոց փոխան բնականարար պիտի յանձնուի մեզ ստորագրեալ և կնքեալ նուիրատոմներ:

Մեծ յոյս ունինք թէ այսպիսի մարդասիրական ձեռնարկ մը իր շատ մը հետեւողներն ալ պիտի ունենայ, հայ որբերու գառն վիճակն ամոքելու ամենաազնիւ զգացումէն թելադրուած:

#### Ա. Ջ. Գ.

Լսարան-Ընթերցատանս Ա. լսարանը պիտի տրուի յառաջիկայ Կիրակի, 3 դեկտեմբերին, յետ միջօրէի ժամը 2ին, Ապու խալիլի Թատրոնին մէջ, ուր պիտի բանախօսէ Տիար Կարապետ Պապայեան, իբրև անդրանիկ աստեղան, նիւթ ունենալով ԳիւղԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ:

Այս առթիւ կը յայտարարենք Պատ. հասարակութեան թէ՛ Լսարանի մուտքն ազատ է, և հետեւաբար պարտականութիւն կը գնենք երկուսեւ Ժողովուրդին վրայ իւր պատուաբեր ներկայութեամբ քաջալերել նորակազմ ընկերութիւնս:

Գահիրէ 29 Նոյ. 99  
Մնամբ յարգանք  
Ի գիւմայ Լսարան-Ընթերց. Գործ. Ժողովոյ  
Ատենադպիր Ատենապետ  
Հ. ԱՋԱՏԵԱՆ Ս. ԲԻԻՐԱՏ

Ն. Բ. Վ. Խտիվը, անյեալ շարաթ դիշեր, ներկայ եղաւ Ռփէրա Խտիվի բացումի ներկայացման:

Ն. Բ. Վ. Կոնստանտինը՝ երկուշաբթի առաւօտ Ապուիսի պալատը երթալով, նախագահեց նախարարաց Ժողովին:

Նոյնպէս այս առաւօտ Ապուիսի պալատը Նորին վսեմութեանն ընդունուեցան Կոնստանտինը և Նոր ձեռնադրուած եպիսկոպոսը՝ Գեր. Եուհաննա-Իլ-Խոքէնտէրանի, ընկերակցութեամբ այն հապէշական պատգամաւորութեան՝ որ այս պահուս Գահիրէ կը գտնուի:

Ազեքսանդրիոյ Էմիլը Վագէթը կը ծանուցանէ թէ Ն. Բ. Վ. Խտիվը մտադիր է, առաջիկայ տարի Մայիս կամ Յունիսին Անգլիոյ թագուհւոյն այցելութեան երթալ:

Թէ եւրոպական և թէ երկպառական ուրիշ լրագրիւններ ևս արտատպած են այսպիսի լուր մը, որ թէպէտ կը կարծուի թէ fantaisiste եղած ըլլայ: ԺՈՒՐՆԱԼ ՏԻ ԳԷՍ

Կ'ըսուի թէ Ն. Բ. Վ. Խտիվը հանրամտագիր է եկող տարի Մէքքէ երթալ այս պարագային տակ Ն. Բ. Վ. արարողագրեալ Ապուիւ Հալիմ փաշա, էմիր իյ հակ պիտի սնուանի:

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

#### ԹՈՒՐԻՔԻԱ

ՌՈՒՍՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԴԷՊՄԸ.—

Պօլսոյ Ռուսական զեսպանը երէկ թրքական կառավարութեան նօրա մը յանձնեց, Պօլիսէն Պաղտատ երկարաձգուելիք երկաթուղւոյն շինութեան համար քանի մը կուսակալութեանց հասցիները գործածուելուն դէմ բողոքելով:

Երկաթուղին Գերման դրամատէրներուն շնորհուած ըլլալով, Ռուսական նօրան աւելորդակի կերպով Գերմանիոյ կ'ակնարկէ:

Պատերազմական տուգանքին յետամնացներուն վճարումը պակասուելու պատուակին տակ, Ռուսիան Թուրքիոյ մէջ գերմանական ազդեցութեան ծաւալմանը դէմ կը մաքառի:

Սուտանի վերջին պատերազմին մէջ Ռուսիայէ փաշայի բռնած բանտարկեալներու կամ գերիներու թիւը 9000 կը հաշուուի, թէ՛ կին թէ՛ մանուկ: Ասոնց մեծ մասը կամաւ անձնատուր եղած են:

Լոնտոնի Tempsի քաջուած հեռագրի մը նայելով, պօշրներ Պէլմինի մէջ ալ Կլէնսօի քաջիկը կրկնած են. իրենց բռնած դիրքը թողլով ետ դարձած են, Ժէնէրալ Մէթուրնի սպասելու համար:

Նաթալի մէջ 400ի չափ հօլանտացիներ պօշրներու միացած են:

### ԿԵՆՏԱՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

#### ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

Անձնական վայելչութիւնը բնագիտականի եւ բարոյականի տեսակէտներով պէտք է ի նկատի առնուի. արտաքին մաքրութիւնը և մտային զարգացումը պէտք է զոյգ ընթանան, որովհետեւ եթէ անհանելի է անձնատէր հպարտ մը, որուն ամբողջ արժանիքը իր մէկ հագուստէն կամ փողկապէն կը կայանայ՝ միեւնոյն աստիճանի ձանձրալի է արժանիքի աէր մէկը՝ որ ըլլայ՝ անհոգութեամբ ըլլայ՝ անձնական սեւէ նկատումներով անտարբեր կը գտնուի իր արտաքին մաքրութեան մասին:

Վայելչագիտութիւնը մեզմէ ամեն բանէ աւելի մաքրութիւն կը պահանջէ:

«Բնութիւնը, կ'ըսէ Վօլթեր, մարդս (1) կենդանիներու ամենէն մերկը՝ եւ իր սկզբնական գեղեցկութեամբ ամենէն նշանաւոր տեսիլած է, մենք ամենէն աւելի ստացած ենք հաճելի ըլլալու փափաքը. որովհետեւ մենք ընկերութեամբ կ'ապրինք, ուրեմն աւելի պէտք ունինք մաքրութեան կանոններուն հետեւելու:»

Առողջապահութեան առաջին պայմաններէն մէկն է մաքրութիւնը. բայց պէտք չէ զայն պաճուածանքի դարձնել. զոչ ըլլալով հագուստներուս, բնակավայրերուս և միջոց իսկ շնչած օդերուս մաքրութեանը. «Կիկերոն կ'ըսէ թէ՛ մաքրութիւնը ոչ սաղտուկ, ոչ պաճուածեալ կերպով պէտք է ուսումնասիրել, այլ միմիայն զգուշանալ գեղջկական կոշտ անհոգութենէ:»

Անմաքրութիւնը ցած հոգի ցոյց կուտայ, լաւ է ուրեմն մարդս միշտ զոյգ ըլլայ իր անձին նկատմամբ, որպէսզի ազէկ խօսուի անոր վրայ եւ ամեն ընկերութեանց մէջ՝ ազատ ըլլայ մտնելու. այդ զգուշութիւնը մարդուս արտաքին մաքրութեանն եւ իր անձին վրայ սարած խնամքէն արդէն իսկ կ'երեւայ:

Տը Ժիւսիէօ կը հաստատէ թէ անմաքրութիւնը տեսակ մը ժանդ է, որ կրնայ մեր առողջութիւնը խանգարել, այդպէսով մեր կեանքը չի վնասելու համար հարկ է ամեն ստաւօտ կանոնս արթնցածնուս պէս լուսայտիւնը, ականջնիս ակնաներնիս, եղունգնիս մաքրենք. բայց կարելի եղածին չափ կարճ միջոցի մը մէջ. որովհետեւ ստաւօտեան այդ ժամերը ամենէն սուղերն են օրուայ միւս ժամերէն. մարդս այդ միջոցին ամենէն առոյգ եւ կայտառ է. իր ամեն ուժերը ամիսփ են. ուստի պաճուածանքով անձնագարգաբարութեամբ չի վատնենք զանոնք ևս մեր միւս գործերուն չ'վնասենք:

Առատ պարզ ջուր եւ աճառ (առանց բուրմի) ասոնք ամենէն անարատ եւ զօրաւոր միջոցներ են մաքրուելու համար. անուշահոտ իւզերը, աճառները եւ այլն առողջ մարդու համար բոլորովին անօգուտ բաներ են. անոնք ղեղեր են որ առողջ մնալու փափաքող մէկը չի գործածեր եւ հիւանդներուն կը ձգէ:

Մօնթէնը կ'ըսէ թէ «Լաւ բուրբուր համար ուեէ արուեստական բուրբուր ունենալու չէ. ուստի անօգուտ չեմ գտներ անգամ մը ևս կրկնելու թէ անուշահոտ ղեղերու գործածութիւնը արդի ընկերակալութեան մէջ իր նորութիւնը կորսնցուցած է, միմիայն չսես հարուստներու չսես կրկնելը կը գործածեն ուշադրութիւնը դրաւելու անտեղի դիտումով:

Կրծական հին գիրքերը շատ մը օրէնքներ հաստատելով անհրաժեշտ կը նկատեն մաքրութիւնը, որոնց մասին հոս օրինակներ բերելը աւելորդ կը նկատեմ:

27/11/1899 ԳԷՍՈՒ Գ. ՉԱՎՈՒՇԵԱՆ

### ԳԷՍ ՈՒ ԳԷՆ

Ամերիկա ամէն տարի 36 միլիոն ֆրանք կը վճարէ Գաղղիոյ՝ արուեստական ծաղկանց ու գլխարկներու համար: Գերմանիա 300 և Անգղիա 30 միլիոն: Դարձեալ Ամերիկա՝ մեծ գումար կը վճարէ կանանց ու արանց կեղծ մազերուն համար:

Դայեակ մը՝ Փրանսայի գիւղերէն մէկուս մէջ գիշեր ժամանակ Արքեպիսկոպոսի մը ամարանոցէն կը կոչուի, աղախիններէն մին դարմանելու համար:

Հետեւեալ օրն դայեակն անձնագովութեան համար իւր տան դրան առջև տախտակ մը կը կախէ՝ վրան սապէս գրուած:

Նորին Սրբազնութեան դայեակը.

Ս. Գ.  
(1) Ամեն սեռի համար պէտք է հասկնանք:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 26 ՆՈՅԵՄԲԵՐ 1899

Ա. Թիւ	1264	չահած է	Յրանք	1000
Բ.	8058	"	"	200
Գ.	3193	"	"	100
Դ.	2279	"	"	50
Ե.	217	"	"	50

Հետևեալը 25 ական ֆրանք կը շահին

3573	8159	7860	4409	8937	1036
3434	3401	9930	1692	6903	5281
2133	7517	3428	491	2504	7988
	4901	6277	146	5353	

ԾԱՆՈԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, Ընկերութեան անուակէն ստիպականութիւնը կը լինին:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ  
ԶԱՓԱՅԱՍՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ  
Ի ՏԱՂՈՒՑԻՔԷ

Դասաւանդութիւնը սկսած են նոյեմբ. ամսոյ 6 էն սկսեալ՝ երեկոյները ժամը 7 էն մինչև 9 1/2 և կ'աւանդուին Անգղ. Գաղղ. Արաբերէն և Հայերէն դասեր:

ՎԿԱՅԵԱԼ ԱՂԲԱՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆԻ ԶՐԻ ԵՆ

Դիմել առ Մ. Յ. ԳՆԱՃԵԱՆ Հիմնադիր-Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց:

ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒԲ

Յոօզֆ Պաֆ վաճառատան մօտերը, Կաւկ-Էլ-Պենաթի Երօս դիմացը

ԵԿԱԻՕՅ ԵՒ ԸՆԿ

Պապի ունին յայտարարելու թէ, վերջերս իրենց նոր բացած փուփն մէջ, անխարդախ աւելբէ կը պատրաստուի ԳԱՂՂԻՍԿԱՆ, ԱՆԳՂԻՍԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուրճի, թէյի եւ կաթի պարսիմաններ, և այլն: Եկաւօֆ եւ Ընկերութիւն մեծ ջանք եւ հոգածութիւն պիտի ունենան իրենց դիմող բոլոր յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու: Յանձնարարութիւնը ամենայն ճշգրտութեամբ եւ փութով կը կատարուին 19 - 50

ԱՒԵՏԻՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

4. ՊՈՒՆՈՅ ԿՕՇՎԱԿԱՐ

ՇՈՒՊՐԱ — ԿԱՄՈՒՐՁԻՆ ԴԻՄԱՑ — ՇՈՒՊՐԱ  
Չառաչոր Խօզաղը

Ֆրանսական և ռուսական ընտիր ապրանքներուն ամենէն ատկունները կը գործածէ միշտ:  
Արուեստին մէջ ունեցած հմտութիւնը ամեն տարակոյսէ վեր է:  
Իրեն պատրաստած ճաշակաւոր ու ձեւաւոր կոշիկները բոլոր յաճախորդաց գոհունակութեան են արժանացած:  
Չեւաւոր և տոկուն կոշիկներ ունենալու փափաքողը՝ երբ առաջին անգամ հոն դիմէ, շատ գոհ պիտի մնայ և անպատճառ մնայուն յաճախորդ պիտի արձանագրէ ինքզինքը:  
2-50

ԼԵՒՈՆ ԿԻՄԻՇԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ԾՕՆՕՊՐԱԾ

Գ.Ա.ՀԻՐԷ. — Մուսի փողօց, — Գ.Ա.ՀԻՐԷ:  
Ս. Ե. Ս. Սեմաովի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քոնսօլի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԻՔ ՀՈՆ Եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար գանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանազարդ, ոսկի, արծաթ եւ ցիֆի:

Ֆրանսական եւ ամերիկեան ապրանք ամենաընտիր տեսակներէն զարգեղէններ, օրքաներ, օղի, մասանիներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԽՈՐ 35-50

ՏՕՊԵՏՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄԱՐՈՅԺ  
Ապիս, Շարէ Բուպրի, քիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակոտներ:

Կը դադրեցնէ վայրկեանապէս ակուայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ: 4 4-10

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՁ  
Վկայեալ սեղական կառավարութիւնն եւ բժշկական վարժարանն

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա Ապո-Էլ-Ազիզ, Սիւր փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը եւ տեղական կրթման պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն դիմողները կատարելապէս գոհ պիտի մնան: 22-24

ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

4. ՊՈՒՆՈՅ  
ՀԱՅ ԲԻԻՐԲԻ ԱՐՉԵՏԱԽՈՐՆԵՐԷՆ ԱՌԱՋՆԱՊԱՐԳԸ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄԱՐԷՏ ԱԼԻ

ՊՍ.Պ.ԷԼ.ԵՍԱԼԻՔ

Ամեն տեսակ հին և նոր մուշտակները եւրոպական և թուրքական ճաշակով ձեւի կը բերէ և նորի կը վերածէ:

Իրեն դիմող յարգելի յաճախորդները պատրաստ պիտի գտնեն նաև մուշտակ օձիքներ և չն:

Անոնք որ իրենց հինգած մուշտակները տանը մէկ անկիւնը նետելով ցեցերու կեր կ'ընեն, կ'ընան այս առիթէն օգտուել:

5-8

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (րաստրդ) սեւ, շագանակագոյն և ոսկեգոյն:

Սեւ ներկ չիլով վայրկեանապէս սեւցնող: Սոյն ներկերու տեսողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադրեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մազ կը բերէ: 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած և հիանալի արդիւնք տեսնուած է: Շիշը 10 զըռող (2 1/2 ֆրանք):

Վերոյիշեալ շուրէն կը գտնուի նաև Աղէք-անդրիա Սիքքէ-Կէտիտ մանրավաճառ Պ. Լեոն Ասլանեանի մօտ:

Ակուայի փոշի և շուր. մին մաքուր և ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող և ամրացնող:

Թող փութան օգտուել այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ և օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակադրոշմները: 3 7-8

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՋԱՌԱՏՈՒՆ

Ի Գ.Ա.ՀԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յիտ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրաշխագրեր, Այցեխարտեր, Յանկեր, Գիրտեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Ընկերութեանց եւ վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտագոյնութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եգիպտոսի ո և է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները անհնայն խնամօք և փութով կը կատարուին: